ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/160

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Գրիգորյանի (լիազորագիր, տրված՝ 30.09.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.09.2019թ. թիվ 26/26-1/15884-2019 գրությամբ «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.09.2019թ. թիվ ՊՆ/02/1944-2019 գրության հիման վրա, 26.09.2019թ. թիվ 26/26-1/15884-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/160 ընթացակարգի շրջանակներում 03.10.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից ուղարկված ծանուցումը հայտնվել է Ընկերության էլեկտրոնային փոստի «Spam» թղթապանակի մեջ, որի հետևանքով Ընկերությունը չի նկատել ծանուցումը և փաստաթղթերը չի ուղարկել: Դրա հետ մեկտեղ Ընկերությունը նաև հաշվի է առել այն փաստը, որ նույնիսկ փաստաթղթեր ընդհանրապես չներկայացնելու դեպքում գնահատող հանձնաժողովը պետք է ծանուցեր երեք աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որը սակայն չի կատարվել:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.09.2019թ. թիվ ՊՆ/02/1944-2019 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգում «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.

N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները, որոշել է մերժել Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/160 ընթացակարգի շրջանակներում 03.10.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/160 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/160 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/8» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.09.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.09.2019թ. թիվ 26/26-1/15884-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.09.2019թ. թիվ ՊՆ/02/1944-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.09.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 11.09.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ

տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակ:

Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.13 ենթակետի 4-րդ պարբերությամբ սահմանվել է, որ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: **Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը** և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 02.05.2019թ. N 516-Ն որոշման ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: **Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Գործող ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ **առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու** կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում **հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 16-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրվել է www.gnumner.am տեղեկագրում հրապարակված գնումների պլանների վերաբերյալ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության 14.10.2019թ. թիվ ՊՆ/02/2108-2019 գրությունը, որի արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ

պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգի գնման առարկա սառնարանային համալիրի արդիականացման ծառայությունների ներառմամբ գնումների պլան հրապարկված չէ www.gnumner.am տեղեկագրում:

Այս տեսանկյունից գտնում եմ, որ Ընթացակարգի գնման առարկայի ներառմամբ տեղեկագրում գնումների պլանի հրապարակված չլինելու պայմաններում հնարավոր չէ պարզել, թե քննարկվող Ընթացակարգը, որի հայտարարությունը և հրավերը հրապարակվել են 26.07.2019թ., պետք է կազմակերպված լիներ 01.06.2019թ. ուժի մեջ մտած ՀՀ կառավարության N 516-Ն որոշմամբ սահմանված նոր կարգավորումներին համապատասխան, թե մինչև նշված որոշումն ուժի մեջ մտնելը գործող Կարգի համաձայն, որն էլ իր հերթին թույլ կտար պարզել, թե Ընկերության կողմից սահմանված եռօրյա ժամկետում հրավերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում արդյոք Ընկերությունը գործող Կարգի 47-րդ կետի համաձայն պետք է ծանուցվեր արձանագրված անհամապատասխանությունը եռօրյա ժամկետում շտկելու վերաբերյալ, թե ոչ, որի պայմաններում հնարավոր կլիներ արձանագրել Ընկերության կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը խախտելու կամ չխախտելու փաստը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված պարտավորության խախտման փաստը, ուստի առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.09.2019թ. թիվ 26/26-1/15884-2019 գրությամբ «Նազարյան Քուլինգ Սիսթեմ» ՍՊԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**